37. 014 . 523 (479. 25) *https://orcid.org/0000-0001-5420-463X* **OI:10.46991/educ-21st-century.v5.i1.235**

ROLE OF RELIGIOUS SUBJECTS IN THE EASTERN ARMENIAN SCHOOLS

Mane Ghevondyan
Yerevan State University, PhD student
"Classic school" educational foundation
Armenia
manegevondyan@gmail.com

Summary

Within the framework of this study, we referred to the parish, diocesan, and monastic charters of Eastern Armenian schools approved during the reign of All Armenian Catholicos Gevorg D. We drew parallels between the Eastern Armenian school and Russian state and spiritual schools. We have analyzed the content of the education of the examined period on the example of Yerevan diocesan school. We have paid special attention to the objectives of religious subjects in general education. Based on published school charters and studies, we analyzed the educational content of Eastern Armenian parochial, diocesan, monastic schools, and discovered what religious subjects were included in those educational centers.

Until now, various researchers have reflected on the history of the Eastern Armenian school, the goals of education and upbringing, the activities of inspectors, textbooks, and teaching methods. It is interesting to find out what kind of religious courses were included in the schools of the examined period, in what order these subjects were studied, what goals they pursued. The coverage of these questions will help to form an idea about the order of study of such subjects in schools, to get acquainted with the goals of Christian education in the examined period.

Thus, Russian state and religious schools had a four-tier system. Each school graduate was admitted to the next school level. The Eastern Armenian school was formed according to the logic of the Russian state and spiritual school systems. There were no state schools, but parish, diocesan, monastic schools were formed under the auspices of the Armenian Church. Parochial and diocesan schools provided secular education. Monastic schools were entered in order to obtain the title of clergyman.

In the examined period, the Eastern Armenian educational policy was aimed at training secular specialists and clergy.

Thus, We learn from the school charters that they were included courses with the titles "Cathexis", "History of the Old and New Testament", "Church singing", "Theology". We learn about the order in which the above-mentioned subjects were studied from the school's charters. An analysis of the subject headings provides evidence that the students received a comprehensive Christian education.

Keywords: Yerevan seminary, East Armenian school, educational program, religious subject, school charters.

РОЛЬ РЕЛИГИОЗНЫХ ПРЕДМЕТОВ В ВОСТОЧНО АРМЯНСКИХ ШКОЛАХ

Гевондян Мане
Ереванский государственный университет, аспирант
"Класическая школа" образователйный фонд
manegevondyan@gmail.com

Аннотация

В рамках данного исследования мы обратились к приходским, уездным и монашеским уставам восточноармянских школ, утвержденные в период правления Католикоса Всех Армян Геворга Д. Мы провели параллели между восточноармянской школой и русской государственной и духовной школами, проанализировали содержание образования рассматриваемого периода на примере Ереванской епархиальной школы. Особое внимание уделили вопросам преподавания религиозных предметов в общеобразовательной системе. На основании опубликованных школьных уставов и исследований мы проанализировали содержание образовательных программ в восточноармянских

приходских, епархиальных, монастырских школах и выяснили, какие религиозные предметы преподавались в этих учебных центрах.

До сих пор различные исследователи размышляли об истории восточно-армянской школы, целях образования и воспитания, деятельности инспекторов, учебниках, методах обучения. Интересно узнать, какие религиозные курсы преподавались в школах рассматриваемого периода, в каком порядке эти предметы изучались, какие цели преследовали. Освещение этих вопросов поможет составить представление о порядке изучения таких предметов в школах, познакомиться с целями христианского образования в рассматриваемый период.

Таким образом, русские государственные и духовные школы имели четырехступенчатую систему. Каждый выпускник школы мог быть принят на следующий уровень школы. Восточноармянская школа формировалась в соответствии с логикой российской государственной и духовной школьной системы. Государственных школ не было, но были созданы приходские, епархиальные, монастырские школы под покровительством Армянской церкви. Приходские и епархиальные школы давали светское образование. В монастырские школы поступали для получения звания священнослужителя. В рассматриваемый период восточноармянская образовательная политика была направлена на подготовку светских специалистов и духовенства. Из школьных уставов мы узнали, что в программу обучения были включены курсы с названиями «Христианское учение», «Священная история Ветхого и Нового Завета», «Церковное пение», «Богословие». Анализ предметных названиях свидетельствует о том, что учащиеся получили всестороннее христианское образование.

Ключевые слова: Ереванское уездное училище, восточноармянская школа, образовательная программа, религиозный предмет, школьные уставы.

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ղևոնդյան Մանե
ԵՊՀ ասպիրանտ,
«Դասական դպրոց» կրթական հիմնադրամ, Հայաստան
manegevondyan@gmail.com

Ամփոփում: Այս ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք արևելահայ դպրոցների՝ Գևորգ Դ Ամենայն հայոց կաթողիկոսի օրոք հաստատված ծխական, թեմական, վանական կանոնադրություններին: Զուգահեռներ ենք անցկացրել արևելահայ դպրոցի ու ռուսական պետական և հոգևոր դպրոցների միջև: Երևանի թեմական դպրոցի օրինակով վերլուծել ենք քննվող ժամանակաշրջանի կրթության բովանդակությունը: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել ընդհանուր կրթության մեջ կրոնական առարկաների նպատակներին: Հրապարակում եղած դպրոցական կանոնադրությունների, ուսումնասիրությունների հիման վրա վերլուծել ենք արևելահայ ծխական, թեմական, վանական դպրոցների կրթության բովանդակությունը, բացահայտել, թե կրոնական ինչպիսի առարկաներ են ընդգրկված եղել այդ կրթօջախներում:

Մինչ օրս տարբեր ուսումնասիրողներ անդրադարձել են արևելահայ դպրոցի պատմությանը, կրթության և դաստիարակության նպատակներին, տեսուչների գործունեությանը, դասագրքերին, ուսուցման մեթոդներին: Հետաքրքրական է պարզել, թե ինչպիսի կրոնական դասընթացներ են ընդգրկված եղել քննվող ժամանակաշրջանի դպրոցներում, ինչ հերթականությամբ են ուսումնասիրվել այդ առարկաները, ինչ նպատակներ են հետապնդել: Այս հարցերի լուսաբանումը կօգնի պատկերացում կազմել դպրոցներում այդօրինակ առարկաների ուսումնասիրության հերթականության մասին, ծանոթանալ քննվող ժամանակաշրջանում քրիստոնեական կրթության նպատակներին:

Այսպիսով, ռուսական պետական և հոգևոր դպրոցները ունեցել են քառաստիճան համակարգ: Յուրաքանչյուր դպրոցի շրջանավարտ ընդունվել է հաջորդ դպրոցական աստիճան: Արևելահայ դպրոցը ձևավորվել է ռուսական պետական և հոգևոր դպրոցական համակարգերի տրամաբանությամբ: Չեն եղել պետական դպրոցներ, սակայն Հայոց եկեղեցու հովանու ներքո ձևավորվել են ծխական, թեմական, վանական դպրոցներ: Ծխական և թեմական դպրոցները ապահովել են աշխարհիկ կրթություն: Վանական դպրոցներ ընդունվել են հոգևորականի կոչում ստանալու նպատակով:

Քննվող ժամանակաշրջանում արևելահայ կրթական քաղաքականությունն ուղղված է եղել աշխարհիկ մասնագետներ և հոգևորականներ պատրաստելուն: Դպրոցական կանոնադրություններից տեղեկանում ենք, որ առարկայացանկերում ընդգրկված են եղել «Քրիստոնէական վարդապետություն», «Հին և Նոր կտակարանի սրբազան պատմություն», «Եկեղեցական երգեցողություն», «Աստվածաբանություն» խորագրերով դասընթացներ: Առարկաների խորագրերի վերլուծությունը փաստում է այն մասին, որ աշակերտները ստացել են համապարփակ քրիստոնեական կրթություն:

Բանալի բառեր: Երևանի թեմական դպրոց, արևելահայ դպրոց, կրթական ծրագիր, կրոնական առարկա, կանոնադրություն:

Ներածություն: 19-րդ դարի երկրորդ կեսից մեծ ուշադրություն է դարձվում դպրոցների կրթական ծրագրերին: Նախքան այդ ժամանակաշրջանը դպրոցների ուսումնական ծրագիրը, առարկայացանկը անորոշ էր: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մի շարք մանկավարժների շնորհիվ համակարգվում են դպրոցների կրթական ծրագրերը:

Առարկայացանկերում ընդգրկված էին այնպիսի դասընթացներ, ինչպիսիք էին՝ *հայերեն, ռուսերեն, պարսկերեն, քերականություն, ընթերցանություն, պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, վայելչագրություն*: Դպրոցների կրթական ծրագրում մեծ տեղ էր հատկացված կրոնական առարկաներին: Կանոնադրություններից տեղեկանում ենք, որ թեմական դպրոցներում դասավանդվել են «Կրոնագիտություն», «Սրբազան պատմություն», «Քրիստոնեական վարդապետություն», «Սրբազան և եկեղեցական պատմություն», «Աստվածաբանություն» խորագրերով դասընթացներ:

Հիմնախնդիր: Ուսումնասիրության հիմնախնդիրն է հրապարակում եղած դպրոցական կանոնադրությունների հիման վրա բացահայտել, թե կրոնական ինչպիսի առարկաներ են ընդգրկված եղել արևելահայ դպրոցում, ինչ հաջորդականությամբ են ուսումնասիրվել այդ դասընթացները, ինչ նպատակներ են հետապնդել:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նպատակն է դպրոցական կանոնադրությունների, Երևանի թեմական դպրոցի օրինակով վերլուծել քննվող ժամանակաշրջանում կրոնական առարկաների դերը:

Գիտական նորույթը: Մինչ օրս արևելահայ դպրոցին վերաբերող ուսումնասիրություններում ներկայացվել են դպրոցների հիմնադրման պատմության, կառավարման համակարգի, տեսուչների գործունեության, կրթության և դաստիարակության նպատակների, կրթության բովանդակության ու մեթոդաբանության, օգտագործված դասագրքերի վերաբերյալ տեղեկություններ:

Այստեղ վերլուծել ենք դպրոցական կանոնադրությունները, առանձնակի անդրադարձել ենք Երևանի թեմական դպրոցի չորս կանոնադրություններին, պարզել կրոնական ինչպիսի դասընթացներ են ընդգրկված եղել արևելահայ ծխական, թեմական,

վանական դպրոցների կրթական ծրագրերում, ներկայացրել, թե ինչ հաջորդականությամբ են ուսումնասիրվել տվյալ առարկաները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Քննվող հարցի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում «1837-1887 յիսնամեակ Հայոց հոգևոր թեմական դպրանոցի Երեւանայ» և «Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը» աշխատությունները: Առանձնակի դեր ունեն պրոֆեսոր Մուշեղ Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատությունը, Լեոյի «Պատմութիւն Երեւանի հայոց թեմական դպրոցի 1837-1912» և «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի: 1838-1913» մենագրությունները, Գրիշա Հարությունյանի «Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը (5-19-րդ դարերում-20-րդ դարի սկզբին)» երկասիրությունը: Արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ծխական, թեմական, վանական դպրոցների՝ «Արարատ» ամսագրի 1868, 1869 թթ. համարներում հրապարակված կանոնադրությունները:

Հիմնական նյութի շարադրանքը: Արևելահայ թեմական կրթօջախները եղել են ժամանակի լավագույն դպրոցական ավանդույթներ ձևավորող, կրթական քաղաքականություն թելադրող, ուսումնական ծրագրեր, կանոնադրություններ մշակող, մասնագետներ պատրաստող, դասագրքեր հրատարակող, գիտակրթական կենտրոններ:

Նախքան նման կրթօջախների ձևավորումը չկար միասնական դպրոցական համակարգ: Դպրոցները չունեին հաստատված կանոնադրություններ, չկային դասագրքեր, բացակայում էին ուսումնական ծրագրեր [9, էջ 117]: Հստակ չէին դպրոցների տեսակները [2, էջ 14]: Նման անորոշության պատճառներից մեկը Մուշեղ Սանթրոսյանը, Արշակ Ալպոյաճյանը, Վահե Երկանյանը կապում են պատմական այն ժամանակաշրջանի հետ, որում գտնվում էր Արևելյան Հայաստանը: Պրոֆեսոր Մուշեղ Սանթրոսյանն այդ առթիվ գրում է. «Տարօրինակ ձևով միահյուսվում ու խաչաձևում էին մի կողմից պարսկա-թուրքական տիրապետության ժամանակաշրջանից եկող հինը, միջնադարյանը, մյուս կողմից՝ այն համեմատաբար նորը, որը գալիս էր Եվրոպայից ու մասնավորապես ռուսական դպրոցից և մանկավարժական մտքից [12, էջ 145]:

Քննարկվող ժամանակաշրջանում ուսուցումը կազմակերպվում էր տարբեր միջավայրերում՝ ուսուցիչ-վարդապետների տներում կամ եկեղեցուն հարակից տարածքներում: Ուսուցման հիմնական բովանդակությունն էր՝ երգեցողություն, աղոթքների ուսուցում, երբեմն՝ քերականություն, ճարտասանություն. «... Գոյությիւն ունէր երկու տեսակ ուսում-խցի և վարժատան: Խցի ուսումն այն էր, որ մէկը մի վարդապետի կամ եպիսկոպոսի սպասաւոր էր դառնում և սովորում էր նրանից գրագիտութիւն, աղօթքներ, փոխասացութիւն, երգեցողութիւն: Պատահում էր, որ ոմանք, բաւական չը համարելով իրանց փոքրաւորների սովորածը իրանց խուցերում, տալիս էին նրանց այնպիսի անձանց, որոնք գիտէին «ազատուական արուեստներ», այսինքն՝ քերականութիւն, ճարտասանութիւն, և փոքրաւորները դրանց մօտ շարունակում էին իրանց ուսումը, յարուցանելով իրանց ընկերակիցների նախանձը» [3, էջ 111-114]:

Դպրոցական կյանքում հիմնարար փոփոխություն տեղի ունեցավ 1836 թ.՝ «Պոլոժենիե» կանոնադրության ընդունումից հետո: Ձևավորվեց դպրոցի նոր մոդել՝ թեմական դպրոցներ կամ սեմինարիաներ, ինչը նորություն էր հայ դպրոցի պատմության մեջ [4, էջ 119]: «Պոլոժենիե»-ով թույլատրվում էր յուրաքանչյուր թեմում ունենալ մեկ թեմական դպրոց: Այդ դպրոցների գլխավոր ղեկավարն էր Ամենայն հայոց կաթողիկոսը: Նրա հոգածության ներքո թեմերի առաջնորդները նշանակում էին տեսուչներ, որոնք պարտավոր էին կազմել կանոններ, ուսման ծրագիր, առարկայացանկ, սահ-

մանել ժամաքանակ: Տեսուչը պատասխանատու էր դպրոցի կրթական ծրագրի իրագործման համար [6, էջ 142]:

Առհասարակ 19-րդ դարի երկրորդ կեսից դպրոցական ոլորտում համակարգային փոփոխություններ տեղի ունեցան: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի օրոք ձևավորվեց Էջմիածնի ուսումնական հանձնաժողովը (1867 թ.): Տվյալ կառույցի նպատակներն էին՝ ա) համակարգել կրթական օջախների տնտեսական, վարչական տարաբնույթ հարցեր, բ) ապահովել կրթական օջախներին անհրաժեշտ պարագաներ, գ) մշակել միասնական կանոնադրություններ ծխական, վանական, թեմական դպրոցների համար [1, էջ 81]: Կարևորագույն քայլ էր միօրինակ կանոնադրությունների հաստատումը ծխական, թեմական, վանական դպրոցների համար: Դրանց միջոցով ծանոթանում ենք տվյալ ժամանակի կրթական պահանջներին, դպրոցների նպատակներին, ուսուցման բովանդակությանը, առարկայացանկերին ու ժամաքանակին:

Ծխական, թեմական, վանական դպրոցների կանոնադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշակերտները սկզբնական կրթություն ստանում էին ծխական դպրոցներում[1]: Նման դպրոցների նպատակն էր հայ երեխաներին սովորեցնել տարրական գիտելիքներ, կրթել «հայացի դպրությամբ» [6, էջ 70]: Այն մասին, թե ինչ տարրական գիտելիքներ էին ստանում աշակերտները տվյալ դպրոցներում տեղեկանում ենք առարկայացանկից: Աշակերտները սովորում էին գրել, կարդալ, թարգմանել գրաբարից աշխարհաբար, հաշվել, իմանալ ու բացատրել քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները: Վերոնշյալ հմտությունները ձեռք էին բերում՝ ա) «Սկզբնական ուսմունք Քրիստոնէական վարդապետութեան», բ) «Թարգմանութիւն Աւետարանի ի գրոց լեզուէ յաշխարհիկ բարբառ», գ) «Ընթերցանութիւն և վայելչագրութիւն հայերէն», դ) «Առաջին մասն քերականութեան Հայոց», ե) «Սրբազան պատմութիւն», զ) Ընթերցանութիւն և վայելչագրութիւն Ռուսաց», է) «Առաջին մասն թուաբանութեան» առարկաների շրջանակում [6, էջ 71]:

Տարրական գիտելիքներ ստանալուց հետո ծխական դպրոցի շրջանավարտները հնարավորություն ունեին կրթությունը շարունակելու թեմական դպրոցներում. «վասն կրթելոյ յայլ եւ այլ հրահանգս ուսմանց զթերավարժ աշակերտս աւարտեալս զընթացս գիտութեանց ի Ծխական դպրոցս» [7, էջ, 141]: Թեմական դպրոցները բաղկացած էին երեք դասարաններից: Առաջին դասարանի և ծխական դպրոցի կրթության բովանդակությունները գրեթե կրկնվում էին: Քանի որ հաճախ աշակերտները կիսատ էին թողնում կրթությունը, դպրոցների տեսուչները, նման ծրագրեր ներդնելով, հնարավորություն էին տալիս աշակերտներին սովորելու կամ կրկնելու գիտելիքները: Ծխական ու թեմական դպրոցի առաջին դասարանի առարկայացանկերի տարբերությունն այն էր, որ թեմական կրթօջախի առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում էին երգեցողություն, իսկ կրոնական առարկաներից սովորում էին «Սրբազան պատմություն»: Թեմական դպրոցի երկրորդ դասարանում շարունակում էին սովորել հայոց քերականության երկրորդ բաժինը, թվաբանության երկրորդ բաժինը, ծանոթանում էին ազգային և ընդհանուր պատմությանը, աշխարհագրությանը, շարադրությունների միջոցով զարգացնում էին հայերեն գրավոր խոսքը, ուսումնասիրում էին

[1] Խոսքը վերաբերում է Գևորգ Դ Ամենայն հայոց կաթողիկոսի օրոք հաստատված կանոնադրություններին: Հաճախ դպրոցները ներկայացվում էին «եկեղեցական-ծխական», «հոգևոր թեմական», «ժողովրդական» անունների ներքո: Այն մասին, թե ինչպիսի չափորոշիչներով էր որոշվում դպրոցի անունը, արդյոք անունը ընտրելիս հաշվի էր առնվում ուսուցման բովանդակությունը: Այս և այլ հարցերին անդրադարձել են ուսումնասիրողներ Մուշեղ Սանթրոսյանը, Վահե Երկանյանը, Գրիշա Հարությունյանը:

պարսկերեն, ռուսերեն քերականություն, վարժեցնում ռուսերեն բանավոր խոսքը: «Սրբազան պատմություն» դասընթացին փոխարինում էր «Քրիստոնէական վարդապետութիւն» առարկան: Ուշագրավ են երրորդ դասարանի դասընթացները: Ավարտական դասարանում աշակերտները ծանոթանում էին հայոց գրականությանը, զարգացնում բանավոր գրավոր խոսքը՝ հայերենից ու ռուսերենից, թվաբանությունից սովորում էին խնդիրներ լուծել, շարունակում էին ուսումնասիրել քրիստոնեության գլխավոր սկզբունքներն ու բացատրությունները: Կանոնադրության մեջ ներկայացված առարկաների խորագրերն ու բացատրությունները փաստում են, որ կրթության բովանդակության համար պատասխանատու անձինք առարկայացանկը կազմելիս առաջնորդվել են մանկավարժական մատչելիության՝ պարզից բարդ մոտեցմամբ:

Վանական դպրոցները նախատեսված էին այն աշակերտների համար, որոնք որոշել էին հոգևորականի կոչում ստանալ. «Հիմն դաստիարակութեան Վանական դպրոցաց պարտի լինիլ կրթութիւն բարեպաշտ, առաքինասէր և կրօնաւորական կենաց, որոյ վասն լինին ստէպ ստէպ ընթերցմունք սուրբ գրոց և այլոց ոգեշահ մատենից, և ունկնդրութիւն խրատուց վանահօրն, նոյնպէս հմտութիւն և վարժութիւն եկեղեցական կարգաց» [8, էջ 6]: Տվյալ դպրոցները բաղկացած էին երեք դասարաններից: Երեք տարիների ընթացքում աշակերտները սովորում էին մի շարք կրոնական առարկաներ՝ «Քրիստոնեական վարդապետություն», «Հին և Նոր կտակարանների պատմություն», «Եկեղեցական պատմություն», «Երգեցողություն», զարգացնում էին բանավոր-գրավոր խոսքը՝ հայերենից և ռուսերենից, ծանոթանում հայոց և ընդհանուր պատմությանն ու աշխարհագրությանը, սովորում լուծել խնդիրներ [8, էջ 6]:

Հետաքրքրական է, որ քննվող ժամանակաշրջանի ռուսական և՛ պետական, և՛ հոգևոր դպրոցները գործում էին գրեթե նույն տրամաբանությամբ: Յուրաքանչյուր դպրոցական համակարգ բաղկացած էր չորս մասից[1]: Աշակերտները և՛ պետական, և՛ հոգևոր դպրոցներ ընդունվելու համար սկզբնական կրթություն ստանում էին ծխական դպրոցներում, հետո՝ ընդունվում գավառական դպրոցներ, հաջորդիվ՝ գիմնազիաներ և համալսարաններ [11, էջ 101]: Ընդհանուր առարկայացանկում բնագիտական ու հումանիտար ոլորտներին առնչվող դասընթացների կողքին մեծ չափաբաժին էր հատկացված կրոնաբարոյական առարկաներին: Աշխարհիկ դպրոցներում ուսումնասիրում էին՝ ա) «Սրբազան պատմություն», բ) «Բարոյագիտություն», գ) «Համառոտ քրիստոնեական վարդապետություն», «Ընդարձակ քրիստոնեական վարդապետություն», «Սուրբ գրքի մեկնություն» դասընթացները: Հոգևոր դպրոցներում ծանոթանում էին՝ ա) «Համառոտ քրիստոնեական վարդապետություն», բ) «Ընդարձակ քրիստոնեական վարդապետություն», գ) «Եկեղեցական երգեցողություն», դ) «Սրբազան պատմություն», ե) «Աստվածաշնչի պատմություն և աշխարհագրություն», զ) «Եկեղեցական պատմություն», է) «Բարոյագիտություն» առարկաներին [11, էջ 104]:

Ռուսական պետական դպրոցներում կրոնական առարկաների հիմնական նպատակներն էին աշակերտներին ծանոթացնել ռուսական եկեղեցու դավանանքին, դաստիարակել քրիստոնեական արժեքներով: Հոգևոր դպրոցների գլխավոր նպատակներն էին՝ ա) պատանիներին դաստիարակել քրիստոնեական արժեքներով, բ) բարելավել հոգևոր կրթությունը, գ) պատրաստել հոգևորականներ, որոնք ընդհանուր պաշտոնական դավանանքի շուրջ կհամախմբեին ռուս ժողովրդին:

[1] Ռուսական դպրոցական համակարգը ներկայացրել ենք Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Դպրոցների տեսակները	
Պետական	Հոգևոր
Դպրոցների կառուցվածքը	
Ծխական	Ծխական
Գավառական	Գավառական
Գիմնազիաներ	Սեմինարիաներ
Բարձրագույն կրթական հաստատություններ	
Համալսարաններ	Ակադեմիաներ

Թերևս հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարող ենք ասել, որ արևելահայ դպրոցական համակարգը առաջնորդվում էր ռուսական դպրոցների օրինակներով: Պետական դպրոցների բացակայությունը չէր խանգարում, որ Հայոց եկեղեցու հովանու ներքո ձևավորվեն աշխարհիկ ու հոգևոր դպրոցներ:

Անկախ արևելահայ դպրոցական կանոնադրություններից՝ թեմական դպրոցները ունեցել են սեփական կանոնադրություններ: Հատկանշական է, որ դրանք ձևավորվել են ավելի վաղ: Երևանի թեմական դպրոցի առաջին կանոնադրությամբ (1843 թ.) կրթօջախի նպատակն էր կրթել արական սեռի ներկայացուցիչների՝ պատրաստելով նրանց հոգևոր կոչման. *«Ընդհանուր նպատակ այսր ուսումնարանի է՝ զի ի միասին ընդ բարոյական լուսավորութեան մանկանց հոգևոր տեսչութեան Հայոց, որ ի գաւառին Երևանու, հասուցեալ լիցին նոցա հնար առ ի գտանել ըստ կարեաց իւրաքանչիւրոցն ի նոցանե զուսումն Ռուսաց եւ Հայրենական լեզուաց, և տարածանելոյ ի միջի նոցա զճշմարիտ բարեպաշտութիւն, յորմէ և ծագի նպատակ հոգևոր ուսման, որ պարտէ լուսաւորել զբարեպաշտ և զլուսաւորեալ պաշտօնեայս Բանին Աստուծոյ: Երևանու Հայոց Հոգևոր ուսումնարանն (անուանեալն Սեմինարիայ) ունի զվախճան կրթելոյ այսու կարգադրութեամբ զամենայն մանկունս արական սեռի հոգևոր կոչման ևեթ, պատկանեալս այսմիկ տեսչութեան»* [4, էջ 151]:

Այն մասին, թե նախնական ինչ գիտելիքներ էին ստանում աշակերտները, տեղեկանում ենք դասացուցակներից: Օրինակ՝ առաջին դասարանի ավարտին աշակերտները կարողանում էին կարդալ հայերեն ու ռուսերեն, ճանաչել թվերը, տիրապետում էին հայերեն ու ռուսերեն վայելչագրության, իմանում էին հայոց դավանանքի գլխավոր սկզբունքներն ու մեկնաբանությունը: Դասավանդվող դասընթացներն էին ա) «Ընթերցանութիւն Ռուսաց և Հայոց լեզուաց», բ) «Քրիստոնէականութիւն Հայոց դաւանութեան», գ) «Ի թուաբանութենէ համարք», դ) «Վայելչագրութիւն Ռուսաց եւ Հայոց»: Դասացուցակում կրոնական առարկային՝ «Քրիստոնէականութիւն Հայոց դաւանութեանը» կից փակագծերում գրված է «*համառոտ*» բառը [4, 147-158]: Սովորաբար քրիստոնեական վարդապետության ուսումնական ձեռնարկների վերնագրերում հանդիպում ենք տվյալ բառին նույնպես: Նման ձեռնարկների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակները կազմել են գրքեր և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների համար: Այն գրքերը, որոնք նախատեսված են եղել ուսուցիչների համար, խորագրերում նշված է եղել «*համառոտ*» բառը: Այսօրինակ գրքերի պատմության մեջ հայտնի են Մարտին Լյութերի

«Քրիստոնեկան մեծ ուսմունքի մեկնություն» և «Քրիստոնեական փոքր ուսմունքի մեկնություն» աշխատությունները: Վերոնշյալներից առաջինը նախատեսված է ուսուցիչների ու հոգևորականների, իսկ երկրորդը՝ հասարակության համար [13, էջ 163]: Նման ուսումնական ձեռնարկներ ստեղծվել են հայ հեղինակների կողմից նույնպես *(Ոսկան Երևանցի, Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիներ, Մխիթար Սեբաստացի և այլք*):

Քննվող ժամանակաշրջանում հայտնի է Գրիգոր քահանա Սուքիասեանցի հեղինակած «Համառոտութիւն Քրիստոնէական Վարդապետութեան» ձեռնարկը[1]: Նշենք, որ Երևանի թեմական դպրոցի չորս կանոնադրություններից միայն առաջինի առարկայացանկում է նշված «*համառոտ*» բառը: Հետաքրքրական է, որ կանոնադրության մյուս տարբերակներում հեղինակները կրոնական առարկային կից նշել են, թե ինչ պետք է անցնեն աշակերտները ուսումնական տարվա ընթացքում, ինչպես, օրինակ, «*Կրոնագիտություն» (բերանացի ուսուցանել զհասարակաց գործածեալ զաղօթս և զսաղմոս)* [4, էջ 204]: Նկատի ունենալով, որ կրթօջախի առաջին կանոնադրությունը կազմվել է այնպիսի ժամանակաշրջանում, երբ դպրոցական ոլորտը գտնվում էր անցումային փուլում, դասագրքերը քիչ էին, 1836 թ. կանոնադրության ընդունումից անցել էր մի քանի տարի, կարծում ենք, որ «*համառոտ*» բառի գործածումը ունեցել է հետևյալ իմաստները. ա) մատնանշել է որևէ հեղինակի դասագիրք՝ նախատեսված ուսուցչի համար, բ) ցույց տվել, թե տվյալ ուսումնական տարվա ընթացքում աշակերտները ինչպիսի գրագիտության մակարդակ պետք է ունենան կրոնական առարկայի շրջանակում: Օրինակ՝ անհրաժեշտ է իմանալ եկեղեցու յոթ խորհուրդների անունները՞, թե՞ խորհուրդների մեկնաբանությունները նույնպես:

Կրթօջախի երկրորդ տարվա ընթացքում ուսումնասիրել են ա) «Քրիստոնէական վարդապետութիւն», բ) «Առաջին մասն Ռուսաց եւ Հայոց քերականութեանց», գ) «Թուաբանութիւն մինչև ցկոտորակն», դ) «Սկզբունք մաթեմաթիքական, ուսումնական, քաղաքական և բնաբանական աշխարհագրութեան», ե) «Ընդհանուր պատմություն», զ) «Պարսից լեզու», է) «Վաելչագրություն Ռուսաց, Հայոց և Պարսից լեզուաց»: Ուսումնական երրորդ տարում «Քրիստոնէական վարդապետութիւն» դասընթացին փոխարինել է «Սրբազան և եկեղեցական պատմութիւն» առարկան: Աշակերտները շարունակել են ուսումնասիրել քերականություն, աշխարհագրություն, պատմություն, թվաբանություն, պարսկերեն [4, էջ 153]:

Դպրոցի երկրորդ կանոնադրությունում (1861 թ.) փոփոխվել է կրթօջախի նպատակը, դասավանդվող առարկաներին կից նշված է ժամաքանակը, վերափոխվել են առարկաների խորագրերը: Համաձայն երկրորդ կանոնադրության՝ բոլոր դասարաններում աշակերտները ուսումնասիրել են «Կրոնագիտություն» դասընթացը՝ շաբաթական չորս ժամով: Ուսուցանվող առարկաներն էին ա) «Լեզվաբանութիւն հայոց», բ) «Լեզվաբանութիւն ռուսաց», գ) «Աշխարհագրութիւն», դ) «Թուաբանութիւն», ե) «Վայելչագրութիւն հայոց եւ ռուսաց», զ) «Պատմութիւն հայոց» [4, էջ 185]:

Կրթօջախի նպատակն «*այլևս միմիայն հոգևորականների որդիներին դաստիարակելը չէ՝ եկեղեցու պաշտոնեաներ ունենալու համար, այլ դրա հետ միասին և առհասարակ «հասարակութեան պիտանի անդամներ» պատրաստելը*» [4, էջ 184]: Նույն նպատակն էր հետապնդում Շուշիի թեմական դպրոցը՝ «*պատրաստել գլխավո-*

[1] Գրիգոր քահանայէ Սուքիասեանց, «Համառոտութիւն Քրիստոնէական Վարդապետութեան», Ի Մոսկով, 1838:

բապես Հայաստանեայց եկեղեցւոյ համար արժանաւոր պաշտօնեաներ. և առհասարակ հայոց հասարակութեան համար լուսավորեալ և ուսեալ անդամներ» [5, էջ 253]:

Շուշիի թեմական դպրոցը բաղկացած էր վեց դասատներից[1]: Ուսումնասիրվող առարկաներն էին՝ ա) «Թվաբանություն», բ) «Աշխարհագրություն», գ) «Հայոց և ռուսաց լեզուներ», դ) «Վայելչագրություն», ե) «Ընդհանուր և հայոց պատմություն»: Բարձր դասարաններում ուսումնասիրում էին երկրաչափություն, ֆրանսերեն ու լատիներեն, բնական գիտություններ: Կրոնական առարկաներն էին՝ «Սրբազան պատմություն», «Եկեղեցական երգեցողություն», «Քրիստոնեական վարդապետություն», «Եկեղեցական պատմություն», «Աստվածաբանություն»: Այս դասընթացները բաշխված էին տարբեր դասարանների միջև:

Աղյուսակ 2

Դասարան	Առարկայի անուն 1	Առարկայի անուն 2
1 դասատուն	Սրբազան պատմություն	Եկեղեցական երգեցողություն
2 դասատուն	Սրբազան պատմություն	-
3 դասատուն	Քրիստոնեական վարդապետություն	Երգ եկեղեցական
4 դասատուն	Քրիստոնէական վարդապետություն	Երգ եկեղեցական
5 դասատուն	Եկեղեցական պատմություն	-
6 դասատուն	Աստուածաբանություն	Եկեղեցական երգեցողություն

Երևանի թեմական դպրոցի երրորդ կանոնադրությունը (1864 թ.) առանձնակի փոփոխության չի ենթարկվել: Հատկանշական է չորրորդ կանոնադրությունը (1865 թ.), համաձայն որի՝ «*գլխաւոր նպատակ հոգևոր դպրոցին Երևանայ է դաստիարակութիւն որդւոց հոգևորականաց և աշխարհականաց թեմին Երևանայ յուսումն գիտութեանց բարոյական կրթութեանց և ի հմտութիւնըս ուղղափառ վարդապետութեան Քրիստոնէական հաւատոյ ըստ ծիսի դաւանութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց*» [4, էջ 197]: Հետաքրքրական է առարկայացանկը: Նախորդների համեմատ այստեղ կրոնական առարկաների կողքին տրված են մեկնաբանություններ ու ժամաքանակ: Բոլոր դասարաններում դասավանդվում է «Կրոնագիտություն» դասընթացը շաբաթական 4-5 անգամ: Սկզբնական դասարանում կրոնական առարկայի շրջանակում աշակերտները բերանացի սովորում են աղոթքներ և սաղմոսներ: Հաջորդ տարի ուսումնասիրում են Հին կտակարանի սրբազան պատմություն, ապա՝ ծանոթանում Նոր կտակարանի սրբազան պատմությանը: Ավարտական դասարանում ուսուցանում են Քրիստոնեական վարդապետություն:

Հետաքրքրական են մանկավարժների՝ կրոնական առարկաների ուսումնական ծրագրերին առնչվող կարծիքները: Առհասարակ կրոնի ուսումնական ծրագրերում ներառված են եղել Հին կտակարանից «Նախապատմական», «Նահապետների», «Դատավորների», «Թագավորների» դարաշրջանները ներկայացնող նյութեր, իսկ Նոր կտակարանից՝ քրիստոնեական բարոյագիտությանն առնչվող նյութեր: Ըստ Իսահակ

[1] Դասատները ներկայացրել ենք Աղյուսակ 2-ում:

Հարությունյանի՝ կրոնական կրթությունը պետք է սկսել «Սրբազան պատմության» ծանոթությամբ: Աշխարհիկ մանկավարժը քրիստոնեական կրթության առաջին աստիճանում կարևորում է այդ պատմությունների մատուցումը, քանի որ նկարագրողական են, կրոնաբարոյական մտքերով հարուստ, պատանիների կանոնավոր զարգացմանը համապատասխան սկզբունքներ են պարունակում [10, էջ 85]:

Խորեն Նարպեն, Գրիգորիս Երզնկյանցը կարևորում են, որ կրոնի ծրագրերում ներառվեն բարոյական և պատմական զրույցներ, հասարակական աստվածապաշտության այն գլխավոր արարողությունները, որոնց մասնակցում է աշակերտը, քրիստոնեական հավատքի համար հիմք հանդիսացող պատմություններ, աղոթքներ, հոգևոր երգեր [10, էջ 85-86]:

Եզրակացություններ: Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք ասել, որ քննվող ժամանակաշրջանում արևելահայ դպրոցը ուղղորդվել է Ռուսական կայսրության դպրոցական համակարգի օրինակով: Չեն եղել պետական դպրոցներ, սակայն Հայոց եկեղեցու հովանու ներքո ձևավորվել են և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր դպրոցներ: Դպրոցական կանոնադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր դպրոցներում բնագիտական, հումանիտար առարկաների կողքին մեծ տեղ է հատկացվել կրոնական դասընթացներին: Դպրոցների տեսուչները առարկայացանկը կազմելիս պահպանել են մանկավարժական այն մոտեցումը, որ կրթության սկզբնական շրջանում աշակերտները ուսումնասիրեն պարզ առարկաներ, որից հետո աստիճանաբար ծանոթանան ավելի բարդ դասընթացներին: Երևանի թեմական դպրոցի կրթության քաղաքականությունն ուղղված է եղել ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևորականներ պատրաստելուն: Կրթօջախի սկզբնական նպատակն է եղել կրթել և դաստիարակել հոգևորականների: Ժամանակի ընթացքում վերանայվել են դպրոցի նպատակներն ու առարկայացանկը: Ընդհանուր կրթական բովանդակության մեջ բնագիտական և հումանիտար մի շարք դասընթացների կողքին հատկանշական են եղել կրոնական առարկաները: Նախնական կանոնադրության մեջ սկզբում աշակերտները ուսումնասիրում էին Քրիստոնեական վարդապետություն, ապա Հին և Նոր կտակարանների պատմություն: Կրթօջախի վերջին կանոնադրության մեջ վերանայված է կրոնական առարկաների ծրագիրը. սկզբում սովորել են աղոթքներ, սաղմոսներ, հաջորդիվ ծանոթացել Հին և Նոր կտակարանների պատմությանը, իսկ ավարտական դասարանում՝ քրիստոնեական վարդապետությանը: Քննվող շրջանում մանկավարժները կարևորել են քրիստոնեական կրթությունը՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Այսպիսով, տվյալ ժամանակաշրջանում աշակերտները ստացել են համապարփակ քրիստոնեական կրթություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Ա., Գևորգ Դ. Մեծազործ կաթողիկոս ամենայն հայոց, III հրատարակություն, Էջմիածին, 2014:
2. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970:
3. Թաղիադեան Մ., Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ Թաղիդեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի ի Հայս, հտ Ա,Կալկաթա, 1847:
4. Լեո, Պատմութիւն Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1837-1918, Թիֆլիս, 1914:
5. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838-1913, Թիֆլիս, 1914:
6. Կանոն յաղագս ծխական հոգեւոր դպրոցացն հայոց որ ի Ռուսաստան// «Արարատ», 1868, N Զ:

7. Կանոնադրութիւնք յաղագս թեմական դպրոցաց Հայոց որ ի Ռուսաստան// «Արարատ», 1869, N Ժ:

8. Կանոնադրութիւն վանական դպրոցաց // «Արարատ», 1869, N Ա:

9. Հարությունյան Գ., Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը (5-19-րդ դարերում-20-րդ դարի սկզբին), Ստեփանակերտ, 2002:

10. Ղևոնդյան Մ., Կրոնական կրթության և դաստիարակության հայկական փորձի ուսումնասիրությունները հայ կրոնամանկավարժական պարբերականներում // «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2020, N Դ:

11. Ղևոնդյան Մ., Ռուսական կայսրության դպրոցներում «Կրոն» առարկայի դասավանդման հարցերի շուրջ (1800-1820 թթ) // «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2021, N 2 (131):

12. Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964:

13. Полякова М. А., Краткий катехизис Мартина Лютера как феномен кросскультурного взаимодействия // «Историко-педагогический журнал», N 1, 2016.

Получено: 12. 04. 2023
Рассмотрено: 26. 04. 2023
Принято: 29. 04. 2023

Received: 12. 04. 2023
Reviewed: 26. 04. 2023
Accepted: 29. 04. 2023

Journal ''Education in the 21st Century'', Vol.1-8/2/, 2022

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License